

«Արմենիա» Հանրապետական բժշկական կենտրոն
փակ բաժնետիրական ընկերություն

Բժշկական թափոնների վնասագերծման

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն



Երևան - 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
2. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	5
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅՆ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	6
3.1. Ֆիզիկաաշխարհագրական և երկրաբանական պայմանները	6
3.2. Կլիման	9
3.3. Օդային ավազան	12
3.4. Ջրային ռեսուրսներ	13
3.5. Հողային ռեսուրսներ	13
3.6. Սոցիալ-տնտեսական պայմանները	14
4. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅՆ ԹՎՈՒՄ՝ ՋՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ	15
4.1. Ջրոյական տարբերակ	15
4.2. Քննարկվող տարբերակներ	16
4.2.1. Այրում	16
4.2.2. Ջերմային վնասազերծում /ախտահանում/	16
4.2.3. Ընտրության հիմնավորում	17
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	17
5.1. Վնասազերծման ենթակա թափոնների բնութագրերը	17
5.2. Թափոնների գործածության տեխնիկական լուծումների նկարագրությունը	19
5.3. Թափոնների գործածության տեխնոլոգիական լուծումների նկարագրությունը	20
5.3.1. Թափոնների ջերմային ոչնչացման կայանք	20
5.3.2. Կլինիկական թափոնների ախտահանման հանգույց /սարք/	21
5.3.3. Տեղափոխում Էկոլոգիա ընկերության տարածք	23
6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	23
6.1. Ռիսկերի գնահատում	23
6.2. Կլինիկական թափոնների հետ վարման և դրանց գործածության ընդունված կարգը	24
6.3. Բժշկական թափոնների հավաքմանը, ժամանակավոր պահմամը ներկայացվող պահանջներ	25
6.4. Օդային ավազան	26

6.4.1. Թափոնների այրման արգասիքների հաշվարկ.....	26
6.4.2. Գազային վառելիքի այրման արտանետումների հաշվարկ.....	28
6.4.3. Մանիտարապաշտպանիչ գոտի.....	30
6.5. Ջրային ռեսուրսներ	31
6.6. Թափոններ.....	31
6.7. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն.....	31
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	32
8. Ազդեցությունների կանխարգելմանը, մեղմացմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումները.....	34
8.1. Մթնոլորտային օդ	34
8.2. Ջրային ռեսուրսներ	35
8.3. Հողային ռեսուրսներ.....	35
9. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների և միջոցառումների ծրագիրը արտակարգ և վթարային իրավիճակների դեպքում:.....	35
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	37
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ.....	38

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կլինիկական թափոնների սխալ գործածությունը կարող է ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունենալ և վտանգ ներկայացնել շրջակա միջավայրի և մարդկանց առողջության համար: Կլինիկական թափոնները կենսաբանական, ֆիզիկական, քիմիական վտանգ են ներկայացնում նրանց համար, ովքեր մասնակցում են թափոնների գործածության գործընթացին: Կլինիկական թափոնները սպառնում հանրային առողջության անվտանգությանն այն դեպքում, երբ մարդիկ, այդ թվում երեխաները, շփվում են չմշակված թափոնների հետ: Բացի այդ, վնասազերծման ոչ լիարժեք մեթոդները նույնպես կարող են խնդիրներ առաջացնել հանրային առողջության համար և աղտոտել շրջակա միջավայրը: Թափոններ առաջացնող և թափոնների հետ գործ ունեցող կազմակերպությունները պատասխանատու են իրենց թափոնների համար՝ գոյացման պահից մինչև դրա վերջնական հեռացումը:

Կլինիկական թափոնների վնասազերծման նպատակներն են.

- 1) Հիվանդներին և առողջապահական համակարգի աշխատողներին պաշտպանել բժշկական թափոնների հետ կապված վտանգներից,
- 2) Հասարակությունը պաշտպանել բժշկական թափոնների հետ կապված վտանգներից,
- 3) Պահպանել շրջակա միջավայրը:

Սույն ՇՄԱԳ հաշվետվության պատվիրատու՝ «Արմենիա» ՀԲԿ գործունեության ընթացքում առաջանում են բազմաթիվ կլինիկական թափոններ, որոնք ներկայում հավաքվում և տեղափոխվում են թափոնների ոչնչացման/այրման «Էկոլոգիա Վ.Կ.Հ.» ՍՊԸ պահեստ, որն ունի համապատասխան լիցենզիա:

Այս գործընթացը բավական ծախսատար է, ինչպես նաև պահանջում է լուրջ կազմակերպական ջանքեր: Ելնելով այս հանգամանքներից «Արմենիա» ՀԲԿ ՓԲԸ նախաձեռնել է հիմնել բժշկական թափոնների վնասազերծման սեփական համալիր, որը թույլ կտա բարձր արդյունավետությամբ և սանիտարական նորմերի և պահանջների պահպանմամբ իրականացնել կլինիկական թափոնների վնասազերծում:

Սույն հաշվետվությունը կազմված է “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն” ՊՈԱԿ կողմից 21.06.2019թ. ներկայացված SU70 տեխնիկական առաջադրանքի պահանջների հիման վրա:

Աշխատանքնում ներկայացված են տեղանքների բնակլիմայական և սոցիալական էլակետային տվյալները:

Հաշվետվությունում նկարագրված են գործունեության տեխնոլոգիական բնութագրերը, տեխնիկական միջոցները:

Դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ գրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունը կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

Աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր:

«Արմենիա» բժշկական կենտրոնը տեղակայված է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան մասում՝ Մարգարյան, 6 հասցեում: Թափոնների վնասագերծման համալիրը տեղադրվելու է նույն հասցեում՝ բժշկական կենտրոնի գոյություն ունեցող շինություններում:

2. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական

շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”

10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիրբացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”

11. <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 30.06.2003թ-ի N 121-Ն որոշում:

12. ՀՀ առողջապահության նախարարի 4 մարտի 2008 թ. N 03-Ն հրաման «ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 2.1.3-3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒՄԱՍԻՆ»

Համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է <<Ա>> կատեգորիայի և ենթակա է փորձաքննության՝ երկու փուլով:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ ԱՅԴ ԹՎՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. Ֆիզիկաաշխարհագրական և երկրաբանական պայմանները

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի հյուսիս-արևմտյան մասում՝ Մարգարյան, 6 հասցեում:

Տարածքը շրջափակված է Հալաբյան, Մարգարյան և Ֆուչիկի փողոցներով: Հյուսիսից գտնվում են մի շարք այլ բժկական հաստատություններ: Հալաբյան փողոցի հակառակ կողմում գտնվում է Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիան, Մարգարյան և Ֆուչիկի փողոցների հակառակ կողմերում՝ բնակելի բազմաբնակարան շենքեր են:

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Ընդհանուր առմամբ Երևանի տարածքում գեոմորֆոլոգիական պայմանները բավական բարդ են: Ռելիեֆի հիմնական տարրերն են Կոտայքի և Ջրվեժ-Ջրվեժի հրաբխային սարավանդների լանջերը, ինչպես նաև Գետառ գետի կիրճի գառիթափ լանջերը: Տարածքին բնորոշ են նաև առանձին հողմահարման էրոզիոն լանջերը, տափարակները, հարթ տարածքները, ողողահունները, ձորակները:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

Ըստ ձևաբանական առանձնահատկությունների տարածքը հանդիսանում է սարավանդի մի մասը՝ քաղաքի ամենաբարձր հատվածներից մեկն, որի մակերևույթը թեք աստիճանաձև է: Մարավանդը երեք կողմից ուղղաձիգ և մեծ թեքության լանջերով իջնում է դեպի հարևան իջվածքները:

Ներկայացվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում, Հրազդան գետի կիրճի մոտակայքում, գետից մոտավորապես 0.8 կմ հեռավորության վրա:

Տարածքի սեյսմատեկտոնական պայմանները

Տարածքի սեյսմատեկտոնական պայմանները բարդ են: Ըստ ՀՀ ազգային ատլասի երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8 – 9 բալ, գետնի առավելագույն հորիզոնական արագացումները՝ 0.2-0.3 մ/վրկ²:

Ստորև բերված է տարածքի իրադրային սխեման:



Նկար 1. Իրադրային սխեմա

3.2 Կլիման

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժմամբ:

Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է 11.5–12°C: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ մինուս 30 °C, բացարձակ առավելագույնը՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ + 42 °C:

Երևանի կլիման աչքի է ընկնում չորայնությամբ: Գարնան ամիսներին (մարտ – մայիս) դիտվում են մինչև 150 մմ տեղումներ, հունիս – սեպտեմբեր ամիսները խիստ չորային են՝ մինչև 64 մմ: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 286 մինչև 353 մմ:

Ամռանն օդի հարաբերական խոնավությունը կազմում է 49% – 53%, ձմռանը՝ 73% – 76%, գարնանը՝ 57% – 61% և աշնանը՝ 51% – 70%:

Տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Հունվար ամսին հանդարտ օրերի թիվը կարող է կազմել 45% – 75%:

Երևանի տարածաշրջամի օդերևութաբանական հիմնական պարամետրերը տրված են ստորև:

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արաբկիր	1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Աղյուսակ 3.2 Օդի հարաբերական խոնավությունը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Արաբկիր	1113	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Արաբկիր օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արաբկիր	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47		

Աղյուսակ 3.4. Քամու պարամետրերը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

1	2	3	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								12	13	14	15	20 50 100		
			4	5	6	7	8	9	10	11					16	17	18
Արաբկիր	1113	Հունվար	13	29	18	7	14	20	6	3	45	0.9	2.0	30	20	23	25
			1.9	1.9	1.6	1.7	1.8	1.5	1.8	1.9							
		Ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2.1					
			3.1	2.6	2.3	2.2	2.5	2.4	2.5	2.5							
		Հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3.4					
			6.0	4.8	1.7	1.7	1.7	1.7	2.0	2.6							
		Հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1.8					
			2.9	2.5	2.0	1.9	1.7	1.9	1.9	2.0							

3.3. Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ՊՈԱԿ կողմից մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 16 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 211 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշման:

Ըստ ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում առկա տեղեկատվության (վերջին տարեկան ամփոփաթիր՝ 2020 թվականի համար) Երևան քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 դիտակետ և 5 դիտակայան: 2020 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները, սակայն տարվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվել են գերազանցումներ: Իրականացված դիտարկումների 21%-ում դիտվել են փոշու, 25%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 24%-ում՝ ազոտի երկօքսիդի, 0.9%-ում՝ գետնամերձ օզոնի համապատասխան ՄԹԿ-ներից գերազանցումներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես բնակլիմայական պայմաններով և աղտոտման աղբյուրներով, այնպես էլ կանաչ տարածքների սակավությամբ:

Աղյուսակ 3.5. Երևան քաղաքի մթնոլորտային օդի դիտարկումների արդյունքները, 2020

№	Որոշվող միացություն	Դիտարկված առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ ³ (դիտակայանի համար)	Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ ³	ՄԹԿ միջին օրական, մգ/մ ³
1	Ծծմբի երկօքսիդ	0.054 (դիտ. N2)	0.012	0.05
2	Ազոտի երկօքսիդ	0.099 (դիտ. N7)	0.032	0.04

3	Փռշի	0.563 (դիտ. N1)	0.116	0.15
4	Գետնամերձ օդոն	0.038 (դիտ. N8)	0.004	0.03

3.4. Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ կողմից:

Երևանի տարածքում հիմնական ջրային ռեսուրս է հանդիսանում Հրազդան գետը իր Գետառ վտակով և Երևանյան լիճը:

Ըստ ՊՈԱԿ 2020 տեղեկագրի, Հրազդան գետի ջրի որակը Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով և վանադիումով:

Նախատեսվող գործունեության տարածքի ուղիղ գծով հեռավորությունը Հրազդան գետի մոտակա հատվածից կազմում է 0.8 կմ:

3.5. Հողային ռեսուրսներ

Դիտարկվող տարածքում հողերի ձևավորման պրոցեսն ընթանում է հրաբխային ապարների՝ բազալտների, տուֆերի, հողմահարման նյութերի վրա: Նրանց վրա ձևավորվում են բաց գորշագույն հողեր: Հողերը հիմնականում ունեն կավավազային կամ ավազակավային մեխանիկական կազմ:

Չոր կլիման և աղքատ բուսական ծածկը պայմանավորում են հողային պրոֆիլի բաժանվածությունը հորիզոնների և օրգանական նյութերով թույլ հագեցվածությունը: Նույնիսկ հողի ամենավերին հորիզոններում թույլ հիմնային ռեակցիայի պայմաններում հումուսի քանակը այդպիսի հողերում 1 %-ից չի անցնում:

Ամռանը հողի մակերևույթը սովորաբար տաքանում է մինչև 50°C, իսկ առանձին դեպքերում՝ մինչև 54°C: Ձմռանը սառչում է միջին հաշվով 2-3 սմ խորությամբ, առանձին տարիներին կարող է սառել մինչև 35սմ: Ամռանը հողն ուժեղ չորանում է և ճաքճքում: Այսպիսի պայմաններում բույսերի աճեցնելն առանց արհեստական ոռոգման գործնականորեն անհնար է:

Համաձայն Երևանի գլխավոր հատակագծի, քաղաքի տարածքը աղտոտված է ծանր մետաղներով և մասամբ՝ ռադիոնուկլիդներով: Ըստ ծանր մետաղներով աղտոտվածության, քաղաքի տարածքը ներկայումս վերագրվում է միջին աղտոտվածության տարածքներին: Սակայն քաղաքի տարածքում առանձնանում են նաև ուժեղ աղտոտված տարածքներ:

Անմիջապես նախատեսվող տարածքը կառուցապատված է բժշկական հաստատությունների մասնաշենքերով, կամ ասֆալտապատ է, առկա է նաև կանաչ գոտի:

3.6. Սոցիալ-տնտեսական պայմանները

Ներկայացվող գործունեության ազդակիր համայնք է հանդիսանում Երևան քաղաքը:

Երևանի¹ տարածքը կազմում է 223 քկմ, բնակչությունը՝ 1075.1 հազ. մարդ:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիսարևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա:

Քաղաքի կլիման խիստ ցամաքային է՝ շոգ ու չոր ամառ և համեմատաբար խստաշունչ ձմեռ:

Երևանը վարչական սահմանով հարում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին:

Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների,

¹ Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք

հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Աջափնյակ վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Արաբկիր, Դավթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին:

Տարածքը՝ կազմում է 2582 հա

Բնակչությունը՝ 109 600 մարդ:

4. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

4.1. Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և տեղում կլինիկական թափոնների վնասազերծում չի իրականացվում: Այս դեպքում՝

- Կլինիկական թափոնների վնասազերծման գործընթացի արդյունքում բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- «Արմենիա» ՀԲԿ առաջացած թափոնների մի մասը առանց վնասազերծման կտեղափոխվեն Երևանի քաղաքային աղբավայր, որը չի կարող ապահովել թափոնների անվտանգ տեղակայում, կամ պետք է տեղափոխվեն Էջմիածին քաղաքում գործող կիզարան: Նման տեղափոխումը իր մեջ վտանգ է պարունակում, կապված տեղափոխման անվտանգության, ինչպես նաև տրանսպորտային լրացուցիչ շարժի, որը իր հերթին արտանետումների և աղմուկի աղբյուր է:
- Նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորությունները:

4.2. Քննարկվող տարբերակներ

Կլինիկական և այլ օրգանական թափոնների վնասագերծումը հիմնականում իրականացվում է այրման, ջերմային մշակման/ախատահանման եղանակներով կամ ստորգետնյա պահեստավորմամբ: Երրորդ եղանակը ի սկզբանե բացառվել է և դիտարկվել են միայն առաջին երկու տարբերակները:

4.2.1. Այրում

Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առավել տարածված վնասագերծման միջոցը թափոնների այրումն է: Ժամանակակից կիզարանները թույլ են տալիս գործնականում ամբողջությամբ վնասագերծել կլինիկական թափոնները:

Այս տարբերակի առավելություններն են.

- Թափոնների արագ և լիարժեք ոչնչացում
- Թափոնների երկարատև պահեստավորման բացառում
- Թափոնների տեղափոխման անհրաժեշտության բացառում:

Տարբերակի թերությունները.

- Ոչ բոլոր թափոնները կարելի է այրել,
- Առաջանում են այրման արգասիքների արտանետումներ,
- Բարձր ջերմային ռեժիմում աշխատանքի անվտանգության խնդիրներ:

4.2.2. Ջերմային վնասագերծում /ախտահանում/

Վարակիչ թափոնների վնասագերծման առավել տարածված եղանակը ջերմային ախտահանումն է: Այն հիմնականում իրականացվում 120 – 130°C պայմաններում, սուր շոգու միջոցով:

Այս տարբերակի առավելություններն են.

- Ցածր ծախսայնություն
- Թափոնների երկարատև պահեստավորման բացառում
- Թափոնների տեղափոխման անհրաժեշտության բացառում:

Տարբերակի թերությունները.

- Ոչ բոլոր թափոնները կարելի է վնասագերծել ջերմային ախտահանման միջոցով:

4.2.3. Ընտրության հիմնավորում

Քննարկելով բոլոր դրական և բացասական կողմերը ընտրվել է այդ երկու եղանակների համակցված տարբերակը:

5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5.1. Վնասագերծման ենթակա թափոնների բնութագրերը

Բժշկական թափոնները, կազմակերպություններում պացիենտների հետազոտության, բուժման, բուժկանխարգելիչ աշխատանքների կամ գիտական հետազոտությունների արդյունքում առաջացած թափոններ են, որոնք բաժանվում են՝

1) վարակիչ թափոնների, որոնք իրենց հերթին դասակարգվում են՝

ա. միկրոկենսաբանական թափոններ

բ. ախտաբանաանատոմիական թափոններ

գ. կենսաբանական հեղուկներ

դ. սրածայր թափոններ

2) քիմիական թափոններ - ախտորոշիչ և օգտագործման ոչ ենթակա քիմիական նյութեր, ինչպես նաև մաքրման, ախտահանման և այլ գործընթացների ընթացքում առաջացող նյութեր, որոնք ունեն թունավոր, քայքայիչ, դյուրավառ հատկություններ

3) դեղագործական թափոններ - ժամկետանց և օգտագործման համար ոչ պիտանի դեղեր, պատվաստանյութեր, շիճուկներ և դեղագործական այլ ապրանքներ:

Նշված թափոնները դասվում են վտանգավոր թափոնների շարքին, ուստի դրանց վնասագերծման գործունեությամբ զբաղվելը ենթակա է լիցենզավորման, որը համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N21-Ն որոշման տրամադրում է շրջակա միջավայրի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը՝ փորձաքննական եզրակացության հիման վրա:

Նախատեսվող բժշկական թափոնների վնասագերծման գործունեությունն ունի իր կարևորությունը՝ ինչպես բնապահպանական, այնպես էլ առողջապահական

տեսանկյունից, քանի որ վերջինիս իրականացումը կարող է նպաստել վտանգավոր թափոնների հեռացման և տեղադրման հետ կապված շրջակա միջավայրի վրա ազդեցության և մարդու առողջության հետ կապված հիմնախնդիրների լուծմանը:

«Արմենիա» ՀԲԿ ՓԲԸ գործունեության ընթացքում առաջանում են վերը նշված բժշկական/կլինիկական թափոնները, որոնց համար, համաձայն գործող օրենսդրության պահանջների, մշակվել և սահմանված կարգով հաստատվել են թափոնների անձնագրեր: Ըստ այդ անձնագրերի կազմակերպությունում առաջանում են հետևյալ թափոնատեսակները.

Աղյուսակ 5.1. Առաջացող թափոնների տեսակները և քանակները

№	Թափոնատեսակի անվանումը	Ծածկագիրը ²	Տարեկան քանակը, տ/տարի
1	Գործածված միանվագ ներարկիչներ	9701080013053	0.5
2	Այլ լաբորատոր թափոններ և քիմիական նյութերի մնացորդներ	5930190001014	3.52
3	Սարմնի և ներքին օրգանների մասեր	9701030001054	1.2
4	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/	9120040001004	820
5	Դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ, դեղամիջոցներ, դեղագործական ապրանքներ, այդ թվում աերոզոլներ՝ փչացած, ժամկետանց, ոչ պիտանի կամ չնույնականացված մնացորդներ և փոշի	9703010013014	2.89
6	Այլ թափոններ, որոնց հավաքումն ու ոչնչացումը իրականացվում է հատուկ պահանջներին համապատասխան վարակների առաջացումը կանխելու նպատակով	9701090001054	2.35
7	Բժշկական ասեղներ՝ փչացած կամ օգտագործված	9701070001054	0.4
8	Փողակներ, սուր առարկաներ (նշտար, հերձադանակ)	9701050001994	2.36
7	Բժշկական թափոններ, որոնք առաջանում են առողջապահական ծառայությունների արդյունքում /ախտորոշում, կանխարգելում, բուժում, ծննդաբերություն/	9701060001054	1.2
10	Վտանգ ներկայացնող բժշկական թափոններ /վարակիչ/	9701010001053	0.5

² Թափոնատեսակների անվանումը և ծածկագիրը տրվում են ըստ ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 25.12.2006թ. N 430-Ն հրամանի Հավելված 1-ի:

<i>N^o</i>	<i>Թափոնատեսակի անվանումը</i>	<i>Ծածկագիրը²</i>	<i>Տարեկան քանակը, տ/տարի</i>
11	Յուղոտված լաթեր	5820060001014	1.53

5.2. Թափոնների գործածության տեխնիկական լուծումների նկարագրությունը

Ուսումնասիրելով առաջացող թափոնների ֆիզիկական, քիմիական և տոկսիկ բնութագրերը առավել նպատակահարմար է գտնվել բաժանել դրանք չորս խմբի.

Ա. Կլինիկական թափոններ, որոնք կարելի է վնասագերծել ախտահանման և մեխանիկական վերամշակման/մանրացման եղանակով:

Բ. Կլինիկական թափոններ օրգանական ծագումով, որոնք կարելի է այրել:

Գ. Ժամկետանց դեղեր և քիմիական նյութերի մնացորդներ:

Դ. Կենցաղային թափոններ

Ստորև բերված են ներկայացված խմբերը և քանակները, բացառությամբ կենցաղային թափոնների:

Աղյուսակ 5.2. Կլինիկական թափոնների դասակարգումը

<i>N^o</i>	<i>Թափոնատեսակի անվանումը</i>	<i>Տարեկան քանակը, տ/տարի</i>
	Խումբ Ա	
1	Գործածված միանվագ ներարկիչներ	0.5
2	Այլ թափոններ, որոնց հավաքումն ու ոչնչացումը իրականացվում է հատուկ պահանջներին համապատասխան՝ վարակների առաջացումը կանխելու նպատակով	2.35
3	Բժշկական ասեղներ՝ փչացած կամ օգտագործված	0.4
4	Փողակներ, սուր առարկաներ (նշտար, հերձադանակ)	2.36
5	Վտանգ ներկայացնող բժշկական թափոններ /վարակիչ/	0.5
	Ընդամենը առաջին խումբ	6.11
	Խումբ Բ	
	Բժշկական թափոններ, որոնք առաջանում են առողջապահական ծառայությունների արդյունքում /ախտորոշում, կանխարգելում, բուժում, ծննդաբերություն/	1.2
1	Մարմնի և ներքին օրգանների մասեր	1.2
2	Յուղոտված լաթեր	1.53
	Ընդամենը	2.73
	Խումբ 3	

№	Թափոնատեսակի անվանումը	Տարեկան քանակը, տ/տարի
1	Դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ, դեղամիջոցներ, դեղագործական ապրանքներ, այդ թվում՝ աերոզոլներ՝ փչացած, ժամկետանց, ոչ պիտանի կամ չնույնականացված մնացորդներ և փոշի	2.89
2	Այլ լաբորատոր թափոններ և քիմիական նյութերի մնացորդներ	3.52
	Ընդամենը	6.41


5.3. Թափոնների գործածության տեխնոլոգիական լուծումների նկարագրությունը

5.3.1. Թափոնների ջերմային ոչնչացման կայանք

Հիմք ընդունելով ՀՀ գործող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի և ԵՄ դիրեկտիվների պահանջները նախատեսվում է գնել ջերմային ոչնչացման կայանք /կիզարան/, որը կհամապատասխանի հետևյալ տեխնոլոգիական լուծումների.

- Հիմնական այրման հանգույց, որի ռեակտորային խցում կապահովվի կայուն 850°C ջերմաստիճան
- Լրաայրման խուց, որում կապահովվի 1200 – 1300°C ջերմաստիճան
- Ծխագազերի մաքրման և հեռացման հանգույց:

Նախատեսվող կայանքի սկզբունքային տեխնոլոգիական սխեման կլինի հետևյալը.



Նկար 2. Կիզարանի սկզբունքային սխեմա

Որպես վառելիք նախատեսվում է օգտագործել բնական գազ:

Այրման կայանքը նախատեսվում է տեղադրել բժկական կենտրոնի դիակիզարանի մասնաշենքում, որն ապահովված է բոլոր անհրաժեշտ պայմաններով: Դիակիզարանը 12 x 6 m չափերով շինությունն է: Նախատեսվում է ապամոնտաժել ներկայում առկա չգործող վառարանը, կատարել ներքին նորոգման աշխատանքներ, տեղադրել դուռ և պատուհաններ և մոնտաժել նոր կիզարանը: Օգտագործվելու է գույություն ունեցող ծխնելույզը, որը գտնվում է բարվոք վիճակում:

Կլինիկական թափոնների այրման արդյունքում առաջանում է չոր մնացորդ /մոխիր/, որն ըստ ոլորտում կիրառվող կայանքների տեխնիկական անձնագրերի անվտանգ է, քանի որ ենթարկվում է բարձր ջերմային ազդեցության, և կարող է տեղափոխվել ընդհանուր բնույթի աղբավայրեր:

5.3.2. Կլինիկական թափոնների ախտահանման հանգույց /սարք/

Կլինիկական թափոնների ախտահանման համար նախատեսվում է օգտագործել ՌԴ «Фармстандарт-Медтехника» կազմակերպության արտադրության СМО-75 սարքը կամ համարժեք այլ սարքեր:

Սարքը նախատեսվում է տեղադրել հիմնական մասնաշենքում /հիվանդանոց/, առանձին հատուկ նախապատրաստված սենյակում:



Նկար 3. CMO-75 սարքի պատկերը

CMO-75 սարքում ախտահանումը իրականացվում է ֆիզիկական եղանակով՝ հագեցած շոգու միջոցով: Գործընթացը կատարվում է ըստ ՌԴ СанПин 2.1.7.2790-10՝ «Санитарно-эпидемиологические требования к обращению с медицинскими отходами» ստանդարտի պահանջների:

Սարքում ախտահանվում են հետևյալ թափոնատեսակները.

- ներարկիչներ,
- հերձադանակներ և սկարիֆիկատորներ
- պոլիմերային և ռետինե կատերերներ, զոնդեր, կապեր
- արյան և լուծույթների ներակրման համակարգեր
- բամբակյա գնդեր, բինտեր, անձեռոցիկներ, վիրակապեր,
- տարբեր տեքստիլ իրեր
- պլաստիկ նյութեր

Աղտահանման ռեժիմը.

132°C – 60 րոպե,

120°C – 90 րոպե:

Վարակիչ թափոնի պատշաճ վնասազերծման արդյունքում առաջացած թափոնը հեռացվում է որպես կենցաղային թափոն («ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 2.1.3-Յ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐ»-ի 5-գլխի 40-րդ կետ):

Ներկայում «Արմենիա» ՀԲԿ ՓԲԸ տնօրինությունը բանակցություններ է վարում վերը բերված պահանջներին համապատասխանող սարքավորումներ արտադրողների հետ գնման պայմանների վերաբերյալ:

5.3.3 Տեղափոխում Էկոլոգիա ընկերության տարածք

«Արմենիա» բժշկական կենտրոնի գործունեության արդյունքում առաջանում են 6.41 տ/տարի ժամկետանց դեղամիջոցներ և այլ լաբորատոր քիմիական նյութերի մնացորդներ, որոնք չեն վնասազերծվում վերը նկարագրված կայանքներում: Ելնելով այս հանգամանքից դրանք շարունակվելու են տեղափոխվել Էկոլոգիա ընկերության պահեստներ հետագա վնասազերծման համար:

6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

6.1. Ռիսկերի գնահատում

Բժշկական թափոնների սխալ գործածությունը կարող է ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունենալ հիվանդների, առողջապահության համակարգի աշխատողների և շրջակա միջավայրի վրա: Վտանգավոր բժշկական թափոնները վտանգ են սպառնում հանրային առողջության անվտանգությանն այն դեպքում, երբ մարդիկ, այդ թվում երեխաները, շփվում են չմշակված թափոնների հետ:

Կլինիկական թափոնների վնասազերծման բնապահպանական ռիսկերը հիմնականում պայմանավորված են թափոնների այրման արդյունքում առաջացող վնասակար նյութերի արտանետումներով:

6.2. Կլինիկական թափոնների հետ վարման և դրանց գործածության ընդունված կարգը

Առողջապահական և այլ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի գործունեության ընթացքում առաջացած վտանգավոր բժշկական թափոնների (բացառությամբ՝ բժշկական ռադիոակտիվ թափոնների) անվտանգ գործածությունը, գոյացման կանխարգելումը, հավաքումը, ժամանակավոր պահումը, վնասազերծումը, ոչնչացումը, փոխադրումը և թաղումը կարգավորվում են ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ «ԲԺՇԿԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՖԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ» N 2.1.3-3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆՈՎ: Կազմակերպությունների անձնակազմերին ներկայացվող ընդհանուր պահանջները կարգավորվում են նշված հրամանով հաստատված հավելվածներով /Վարակիչ բժշկական թափոնների ախտահանման/վարակազերծման եղանակը և պայմանները կարգավորվում են նշված հրամանի հավելված 2-ի համաձայն/:

Վերամշակման ենթակա թափոնների տեսակները և քանակը սահմանվում են կազմակերպության բժշկական թափոնների գործածության Ակտով, որով կարգավորվում են բժշկական թափոնների գործածության՝ ներառյալ դրանց ըստ տեսակի առանձնացման, տարողությունների և բեռնարկղերի մեջ տեղադրման, մեկուսացման, տեղափոխման և ընդունման, վնասազերծման և վարակազերծման բոլոր փուլերի իրականացումը նկարագրող ընթացակարգերը, դրանց կատարման ժամանակացույցը, վնասազերծման արդյունքում ստացված թափոնի հեռացման, թաղման և/կամ հետագա օգտագործման կարգը: Վերամշակման նպատակով բժշկական թափոններն այլ կազմակերպություններին պետք է տրամադրվեն այնպես, որպեսզի բացառվի դրանց կրկնակի օգտագործումը բժշկական նպատակներով: Արգելվում է բժշկական թափոնների բեռնաթափումը բաց աղբավայրերի մակերեսներին:

Բժշկական թափոնների գործածությունը կարգավորելու և դրա հետ կապված մարդու առողջության անվտանգության պահանջները ապահովելու նպատակով գործող սանիտարական կանոնների պահանջների հիման վրա յուրաքանչյուր կազմակերպության տնօրեն ընդունում է բժշկական թափոնների անվտանգ գործածությունը կարգավորող գործողությունների իրավական ակտ (այսուհետ՝ Ակտ): Բժշկական թափոնների գործածության ակտը իրենից ներկայացնում է փաստաթուղթ, որը նկարագրում է կազմակերպության գործառույթները՝ թափոնների գոյացումից մինչև հեռացում:

6.3. Բժշկական թափոնների հավաքմանը, ժամանակավոր պահմամը ներկայացվող պահանջներ

Շրջակա միջավայրի վրա, հիվանդների և առողջապահության համակարգի աշխատողների վրա ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցությունները կանխարգելելու նպատակով բժշկական թափոնների գործածության համար կարևոր են հետևյալ պահանջների իրականացումը:

1. Բժշկական թափոնները հավաքվում (տարանջատվում) և պահվում են առանձին՝ ըստ տեսակների՝ բացառելով դրանց միմյանց խառնվելը:

2. Բժշկական թափոնները՝ բացառությամբ վարակիչ միկրոկենսաբանական թափոնների և միկրոկենսաբանական հեղուկների, դրանց գոյացման վայրում անմիջապես առանձնացվում են և տեղադրվում դրանց հավաքման համար հատուկ տեղադրված և «Բժշկական վտանգավոր թափոններ» մակնշումը կրող տարողությունների մեջ:

3. Բժշկական թափոնները՝ բացառությամբ սրածայր թափոնների և կենսաբանական հեղուկների, դրանց գոյացման տեղում տեղադրվում են դիմացկուն, անթափանց, կողքերից և հատակից արտահոսք չունեցող մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային տոպրակներում և (կամ) մեկանգամյա կամ բազմակի օգտագործման կարծր տարողությունների մեջ:

4. Բոլոր տեսակի բժշկական թափոնները տարողությունների մեջ տեղադրվելուց հետո հերմետիկորեն փակվում են, իսկ ախտաբանաանատոմիական, միկրոկենսաբանական, սրածայր և քիմիական թափոնները նաև կնքվում, լրացվում պիտակ՝ դրա վրա նշելով տեղադրված բժշկական թափոնի տեսակը, դրա՝ տարողությունում տեղավորելու կոնկրետ ժամը, օրը, ամիսը, տարեթիվը, իր անունը և ազգանունը, ինչպես նաև կազմակերպության անվանումը:

5. Լրացված պիտակը ամրացվում է տարողությանը, որն անմիջապես տեղափոխվում է բժշկական թափոնների ժամանակավոր պահման հատուկ տարածք:

6. Փակված տարողությունները կարող են բացվել միայն բժշկական թափոնների վնասազերծման նպատակով:

7. Բեռնարկղերի մեջ տեղադրված բժշկական թափոնների ժամանակավոր պահման համար կազմակերպությունում առանձնացվում է հատուկ տարածք:

8. Ժամանակավոր պահման հատուկ տարածքը պետք է՝ պաշտպանված լինի մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն.

9. Տարածքը պետք է ախտահանվի պարբերաբար և ապահովված լինի ջրի ծորակներով և ջրահեռացման ցանցով, պատերն ու առաստաղն ունենան անջրաթափանց ծածկույթ, տարածքի դռները ապահովեն բժշկական թափոնների բեռնարկղերն ավտոտրանսպորտի միջոցով տեղափոխելու հնարավորությունը:

10. Պետք է բացառվի կենդանիների, այդ թվում՝ միջատների և կրծողների շփումը բժշկական թափոնների հետ, ինչը ապահովելու համար պարբերաբար իրականացվում է միջատասպան (դեզինսեկցիա) և կրծողասպան (դեռատիզացիա) միջոցառումներ:

12. Ժամանակավոր պահման հատուկ տարածք կարող են մուտք գործել միայն բժշկական թափոնը հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողները:

Բժշկական թափոնների գործածության Ծրագրով սահմանված ժամանակացույցի կատարման նպատակով յուրաքանչյուր կազմակերպություն վարում է հատուկ մատյաններ՝ բժշկական թափոնի գոյացման տեղում և ժամանակավոր պահման հատուկ տարածքում:

6.4. Օդային ավազան

Կայանքի շահագործման ընթացքում վնասակար նյութերի արտանետումները առաջանում են գազային վառելիքի և թափոնների այրման արդյունքում:

6.4.1. Թափոնների այրման արգասիքների հաշվարկ

Նախատեսվող BRENER կայանքի (կիզարանի) տեխնիկական փաստաթղթերում չեն բերվում վնասակար նյութերի արտանետումների տվյալները, ուստի կլինիկական թափոնների այրման ժամանակ առաջացող վնասակար նյութերի արտանետումների հաշվարկի համար հիմք են հանդիսացել ԵՄ “Աղտոտող նյութերի մթնոլորտ արտանետումների գույքագրման ուղեցույց”-ի կողմից առաջարկված տեսակարար գործակիցները (The joint EMEP/EEA Air Pollutant Emission Inventory Guide book, 2016):

Համաձայն նշված ուղեցույցի տարբեր տեսակի թափոնների այրման համար սահմանված են սահմանափակող ցուցանիշներ /տես ուղեցույցի հավելված 2/:

BRENER կայանքը արտադրված է համաձայն ԵՄ N2000/76/EC դիրեկտիվի պահանջներին, համապատասխանաբար հաշվարկների համար ԵՄ ուղեցույցը կիրառելի է:

Սույն հաշվետվությունում կատարվել են կլինիկական թափոնների այրման ընթացքում առաջացող նյութերի արտանետումների հաշվարկներ, որոնք

համեմատվել են ՀՀ-ում գործող սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՄԹԿ) հետ:

Հաշվարկները կատարվել են ըստ EMEP/EEA ձեռնարկի տեսակարար գործակիցների՝ բազմապատկելով այրվող թափոնների քանակների վրա: Ձեռնարկում ներկայացված են մի շարք գործակիցներ, որոնցից ընտրվել են հիմնականները, քանի որ մնացածը ներկայացված են մգ ցուցանիշով:

Այրման ենթակա թափոնների տարեկան քանակը կազմում է 2.73 տ/տարի: Կայանքի ժամային արտադրողականությունը կազմում է 50 – 100 կգ/ժամ: Հաշվի առնելով EMEP/EEA ձեռնարկի դասակարգումը, ըստ որի նվազագույն արտանետումները /բերված են աղյուսակ 3.1-ում/ ապահովվում են 50 կգ/ժամ դեպքում, նախատեսվում է կայանքի բեռումը նույնպես կատարել 50 կգ ժամում: Այդ նախապայմանին հետևելու համար նախատեսվում է կուտակել 300 կգ այրման ենթակա կլինիկական թափոններ և դրանք այրել 6 ժամվա ընթացքում: Այս հաշվարկը հիմնված է այն մոտեցման վրա, որ մոտավորապես ամիսը մեկ անգամ կայանքը միացվի և մեկ օրվա ընթացքում այրվի հավաքված թափոնը: Կայանքի նախապատրաստման և անջատման համար պահանջվում է 2 ժամ: Ընդամենը կայանքի տարեկան ժամերը կկազմեն՝

$$2730 \text{ կգ/տարի} : 50 \text{ կգ/ժամ} = 54.6 \text{ ժամ/տարի}:$$

Հաշվարկների արդյունքները բերված են աղյուսակ 6.1-ում:

Աղյուսակ 6.1. Թափոնների այրման արդյունքում առաջացող արտանետումների բնութագրերը և քանակները

Աղտոտող նյութի անվանումը	ՄԹԿ միանվագ առավելագույն, մգ/մ ³	Չափման միավոր	Տեսակարար գործակիցը ³	Արտանետումները	
				տ/տարի	գ/վրկ
1	2	3	4	5	6
NO ₂	0.2	կգ/տ թափոն	2.3	0.0063	0.032
CO	5.0	կգ/տ թափոն	0.19	0.0005	0.0025
Սահմանային ածխաջրածիններ	1.0	կգ/տ թափոն	0.7	0.0019	0.0097
SO ₂	0.5	կգ/տ թափոն	0.54	0.0014	0.0075
Կախված մասնիկներ	0.5	գ/տ թափոն	17	0.00005	0.00025 ⁴

³ The joint EMEP/EEA Air Pollutant Emission Inventory Guide book, 2016

⁴ Արտանետման այս աստիճան փոքր քանակը պայմանավորված է կայանքի կազմում առկա ֆիլտրով

6.4.2. Գազային վառելիքի այրման արտանետումների հաշվարկ

Նախատեսվող այրիչները կահավորված են ժամանակակից ավտոմատ կարգավորիչ սարքերով, ապահովելով նվազագույն արտանետումներ, սակայն քանի որ տեխնիկական անձնագրերում բերված չեն տեսակարար արտանետումների գործակիցները, վառելիքի այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ «Сборник методик по расчету выбросов в атмосфере загрязняющих веществ различными производствами» մեթոդական ձեռնարկի: Հաշվարկները կատարվել են ըստ ձեռնարկի տեսակարար գործակիցների՝ բազմապատկելով բնական գազի ծախսվող ծավալների վրա: Ըստ նախնական հաշվարկի բնական գազի տարեկան պահանջվող ծավալը կկազմի՝ 546 մ³/տարի:

Աղյուսակ 6.2. Վառելիքի այրման արտանետումները

№	Արտանետվող նյութը	Արտանետման տեսակարար գործակիցը	Չափման միավորը	Արտանետում, տ/տարի	Արտանետում, գ/վրկ
1	NO ₂	2.15	գ/մ ³ գազ	0.0012	0.006
2	CO	12.9	գ/մ ³ գազ	0.07	0.036

Արտանետվող նյութերի տարեկան ամփոփ քանակները և բնութագրերը բերված են աղյուսակ 6.3-ում:

Աղյուսակ 6.3. Արտանետումների ամփոփ քանակները և բնութագրերը

Նյութի անվանումը	ՄԹԿ միանվագ առավելագույն, մգ/մ ³	Վտանգավորության դասը	Նյութերի արտանետումը, տ/տարի	Նյութերի արտանետումը, գ/վրկ
Ազոտի օքսիդներ /ազոտի եկօքսիդի հաշվարկով/	0.2	2	0.075	0.038
Ածխածնի օքսիդ	5.0	4	0.0705	0.0385
Սահմանային ածխաջրածիններ	1.0	4	0.0019	0.0097
Ծծմբի երկօքսիդ	0.5	3	0.0014	0.0075
Կախված մասնիկներ	0.5	3	0.00005	0.00025

Ինչպես երևում է աղյուսակից, արտանետումների քանակները չնչին են և չեն կարող էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և մերձակա բնակիչների առողջության վրա:

Աղյուսակ 6.4-ում բերված են արտանետումների աղբյուրների բնութագրերը և արտանետումների քանակները:

Աղյուսակ 6.4. Արտանետումների աղբյուրի բնութագրերը և արտանետումների քանակները

Արտադրության, տեղամասի անվանումը	Արտանետումների առաջացման աղբյուրները		Արտանետման աղբյուրը	Արտանետման աղբյուրի համարը	Արտանետման աղբյուրի բարձրությունը, H, մ	Աղբյուրի տրամագիծը, մ	Արտանետման արագությունը, մ/վրկ	Արտանետման ջերմաստիճանը T°C
	անվանումը	քանակը						
1	2	3	4	5	6	7	8	9
Կիզարան	Գազային վառարան	1	Խողովակ	1	12.0	0.5	12.0	400

Աղյուսակ 6.4-ի շարունակությունը

Մաքրման ենթակա նյութերի Ապահովվածության գործակիցը, %	Մաքրման նվազագույն աստիճանը	Աղբյուրի կոորդինատները քարտեզ սխեմայի վրա				Նյութերի անվանումը	Արտանետումների քանակները	
	Մաքրման առավել. չափը, %	X 1	X 2	Y 1	Y 2		գ/վրկ	տ/տարի
100	85/80	170	-	330	-	<ul style="list-style-type: none"> ❖ Կախված մասնիկներ ❖ NO₂ ❖ CO ❖ SO₂ ❖ Ածխաջրածիններ սահմանային 	0.00025	0.0005
-	-						0.038	0.075
-	-						0.0385	0.0705
							0.0075	0.0014
							0.0097	0.0019

6.4.3. Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, «Էռա» համակարգչային ծրագրով, 6.4-րդ աղյուսակում բերված տվյալների հիման վրա:

Բնակլիմայական պայմանները և նյութերի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները վերցվել են ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ գրությունից:

Հաշվարկների արդյունքները բերված են Հավելված 1-ում:

Ըստ այդ հաշվարկների աղտոտվածության առավելագույն մակարդակը բոլոր նյութերի համար գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

Առավելագույն կոնցենտրացիաները ՍԹԿ մասով և մգ/մ³ ցուցանիշներով բերված են աղյուսակ 6.5-ում:

Աղյուսակ 6.5. Գետնամերձ կոնցենտրացիաները

№	Աղտոտող նյութեր	Բնակելի գոտիների առավելագույն միանվագ ՍԹԿ ⁵ , մգ/մ ³	Գետնամերձ կոնցենտրացիա	
			ՍԹԿ մասով	Մգ/մ ³
1	Ազոտի երկօքսիդ	0.2		
2	Ածխածնի օքսիդ	5		
3	Անօրգանական փոշի	0.5		
4	Սահմանային ածխաջրածիններ	1		
5	Ծծմբային անհիդրիդ	0.5		

⁵ «ԲՆԱՎԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԿՈՆՑԵՆՏՐԱՅԻԱՆԵՐԻ-ՍԹԿ) ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ կառավարության 2 փետրվարի 2006 թվականի N 160-Ն որոշում

6.4.4. Մանիտարապաշտպանիչ գոտի

Մանիտարապաշտպանիչ գոտիների չափերը սահմանվում են CH 245 – 71 ստանդարտով, սակայն նման կարգի կայանքների համար դասակարգում այդ ստանդարտում չկա:

Ռուսաստանի Դաշնության պետսանկտիդիսկոդիայի Դաշնային Կենտրոնը սահմանել է սանիտարապաշտպանիչ գոտի ИИ-50-ОБЕИ շարքի կայանքների համար (№ 77.ФЛ.29.945.П.000005.01.05) 10 – 100 մ: Արմենիա ՀԲԿ պարագայում ընդունվել է առավելագույն 100 մ ՍՊԳ, որը լիովին ապահովված է, քանի որ մոտակա բնակելի տները՝ Ֆուչիկի փողոցի և Դավթաշեն թաղամասի առանձնատների հեռավորությունը կազմում է 245 – 250 մ:

6.5. Ջրային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության համար ջուր չի նախատեսվում և համապատասխանաբար արտահոսք նույնպես չի լինի

6.6. Թափոններ

Ըստ նախատեսված կայանքի տեխնիկական փաստաթղթերի և նմանատիպ կայանքների փորձի կլինիկական թափոնների այրման արդյունքում առաջանում է նստվածք՝ մոխիր, որի քանակը կարող է կազմել այրվող թափոնների 5 – 10 տոկոս: Ելնելով այս տվյալներից Արմենիա ՀԲԿ թափոնների այրման կայանքում կարող է առաջանալ 138 – 273 կգ/տարի այրման մնացորդներ՝ մոխիր: Ըստ BRENER կայանքի տեխնիկական բնութագրավկայականի թափոնը անվնաս է և կարող է տեղափոխվել կենցաղային աղբավայր:

Այս թափոնը ՀՀ բնապահպանության /շրջակա միջավայրի/ նախարարի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանի հավելվածում ներկայացված է 3130180001013 ծածկագրի տակ՝ «թափոնների այրման մոխիր (այրման վառարաններ)» տողում:

6.7. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Նախատեսվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնաձին ազդեցության տեսակետից բժկական կենտրոնի շրջանում հիմնական աղտոտման աղբյուր են հանդիսանում ավտոճանապարհներով անցնող ավտոտրանսպորտային միջոցները:

Հաշվի առնելով ազդեցության բնույթի էական տարբերությունը, այդ գործոնը զգալի հավաքական ազդեցություն չի կարող ունենալ:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N 764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողածածկի և ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում, հաշվարկում ներառված է միայն ՕԱԳ-ն:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրի հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է՝ արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,

- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \tau_q \Phi_g \sum \Psi_i \Phi_i, \text{ որտեղ}$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,

τ_q -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի ընդունվում է 10:

Φ_g -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն

$\Phi_g = 1000$ դրամ:

Ψ_i -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է: Ազոտի երկօքսիդի՝ 12.5, ածխածնի օքսիդ՝ 1, կախված մանսիկներ՝ 10, ածխաջրածինների՝ 3.16, ծծմբային անհիդրիդի՝ 16.5:

Φ_i -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Φ_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\Phi_i = q (3 S_{U_i} - 2 U \theta U_i), S_{U_i} > U \theta U_i (2)$$

որտեղ՝

$U \theta U_i$ -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

S_{U_i} -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Հաշվի առնելով, որ ցրման արդյունքում ստացված գետնամերձ կոնցենտրացիաները չեն գերազանցում $U \theta U_i$ նորմերը՝ $\Phi_i = S_{U_i}$:

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Հաշվարկի արդյունքները բերված են աղյուսակ 7.1-ում: Արտանետվող նյութերի քանակները վերցվել են 6.4. աղյուսակից:

Աղյուսակ 7.1. Տնտեսական վնասի ցուցանիշները

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Վ	Շգ	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ
	S_i	q	$\Phi_i = S_i \times q$			$U = \sum \Phi_i \times \tau_i$
Փոշի /կախված մասնիկներ/	0.00005	1	0.00005	10	10	5
Ածխածնի օքսիդ	0.0705	1	0.0705	1	10	705
Ազոտի երկօքսիդ	0.075	1	0.075	12.5	10	9375
Ծծմբային անհիդրիդ	0.0014	1	0.0014	16.5	10	231
Ածխաջրածիններ սահմանային	0.0019	1	0.0019	3.16	10	60
Ընդամենը						10376

Ընդամենը տնտեսական վնասը կկազմի 10376 դրամ:

8. Ազդեցությունների կանխարգելմանը, մեղմացմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումները

8.1. Մթնոլորտային օդ

Ազդեցությունները նվազեցնելու համար կարևոր են հետևյալ միջոցառումների կատարումը.

- կլինիկական թափոնների վնասազերծման համար նախատեսված է տեղադրել երկաստիճան ջերմային վնասազերծման կայանք,

- ապահովել այրման ռեժիմը և անհրաժեշտ ջերմաստիճանը ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդային խցում,
- պարբերաբար իրականացնել սարքի պրոֆիլակտիկ ստուգում և տեստավորում
- սարքի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն հատուկ պատրաստված անձնակազմի կողմից,
- իրականացնել օդային ավազանի մոնիթորինգ՝ ազոտի և ծծմբի օքսիդների արտանետումները կանխելու նպատակով:

8.2. Ջրային ռեսուրսներ

- թափոնների պահեստավորումն իրականացնել այնպես, որպեսզի բացառվի դրանց շփումը անձրևաջրերի հետ,
- վնասագրեթման սարքի մաքրումն իրականացնել չոր եղանակով, առանց ջրի օգտագործման:

8.3. Հողային ռեսուրսներ

- Բեռնարկղերի մեջ տեղադրված բժշկական թափոնների ժամանակավոր պահման համար կազմակերպությունում առանձնացնել հատուկ տարածք, որն ունենա բետոնապատ հատակ,

- Ժամանակավոր պահման հատուկ տարածքը պետք է՝ պաշտպանված լինի մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ քամի, արևի ճառագայթներ և այլն.

- պարբերաբար իրականացնել մերձակա տարածքների ստուգում:

- Արտադրական կեղտաջրերի առաջացումը կանխելու համար կայանքի մաքրումը իրականացվելու է չոր եղանակով, առանց ջրի կամ լուշույթների օգտագործման:
- Կայանքը սրասարկող բանվորը, ինչպես նաև կլինիկական թափոնների հետ առնչվող անձնակազմը անցնում է համապատասխան դասընթաց և պարբերաբար հրահանգավորվում է:

9. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների և միջոցառումների ծրագիրը արտակարգ և վթարային իրավիճակների դեպքում:

Կայանքի շահագործման ժամանակ հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ

հնարավոր չափով նվազեցնելու համար բժշկական կենտրոնում մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է հետևյալ միջոցառումները.

- Բնական աղետների ժամանակ (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն) կլինիկական թափոնների կանգնեցվում է և անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:
- Հրդեհի ժամանակ հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը տեղափոխվում է անվտանգ վայր:
- Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների ընթացքում հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների ավելացումներ:

Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները).

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է կայանքի արտադրական գործընթացների հսկողությունը,
- II կարգի վտանգի ժամանակ սահմանափակվում է ջերմային վնասազերծման արտադրողականությունը,
- III կարգի վտանգի ժամանակ դադարեցվում ջերմային վնասազերծման գործընթացը:

Անբարենպաստ օդերևույթաբանական պայմանների միջոցառումները իրականացվում են անմիջապես բժշկական կենտրոնի անվտանգության պատասխանատուի կամ նրան փոխարինող անձի կողմից:

10. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԾՐԱԳԻՐ

Նախատեսվող գործունեության հիմնական բնապահպանական ազդեցությունը պայմանավորված է կլինիկական թափոնների վնասակար հատկություններով, ինչպես նաև այրման ընթացքում առաջացող վնասակար նյութերի ազդեցությամբ:

Ինչպես նախորդ բաժիններում նշվել է, հիմնական նյութերն են ազոտի և ծծմբի երկօքսիդները ու ածխածնի օքսիդը:

Օդում ազոտի և ծծմբի երկօքսիդի ու ածխածնի օքսիդ պարունակությունը վերահսկելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ):

Այդ նպատակով նախատեսվում է պայմանագիր կնքել մասնագիտացված բնապահպանական կազմակերպության հետ, որը բժշկական կենտրոնի տարածքում կկատարի նմուշառում և ազոտի ու ծծմբի երկօքսիդի, ինչպես նաև ածխածնի օքսիդի պարունակության որոշում:

Սակայն մոնիթորինգի հիմնական միջոցառումը՝ այրման ընթացքում մոխրի քիմիական բաղադրության ստուգումն է, որը հնարավորություն կտա գնահատել կայանքի աշխատանքի համապատասխանությունը տեխնիկական պահանջներին:

Մոնիթորինգի միջոցառումների պարբերականությունը կլինի եռամսյակային, չափումների արդյունքները կգրանցվեն մոնիթորինգի մատյաններում և կտրամադրվեն վերահսկող մարմիններին:

Մոնիթորինգի տարեկան ծախսերը կլինեն՝ 320.0 հազար դրամ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СН 245 – 71. Санитарные нормы проектирования промышленных предприятий
2. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
3. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ: ЕМЕР/ЕЕА
4. “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ” հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N 91 – Ն Որոշմամբ
5. Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы, Обнинск 1984г.
6. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Госкомгидромет, Ленинград, 1986
7. Пособие по составлению раздела проекта “Охрана окружающей природной среды ” к СНиП 1.02.01-85. Госстрой СССР, ЦНИИПРОЕКТ, Москва, 1989г.
8. РД 52.04.186-89. Руководство по контролю загрязнения атмосферы. ГК СССР по гидрометеорологии
9. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Միջոցառման պատասխանատու</i>	<i>Արտաքին վերահսկողություն</i>
<p>Կլիմայի և կենսադային թափոնների պահեստավորում</p> <p>Ջրային ռեսուրսներ</p> <p>Այրման կայանքի շահագործում</p>	<p>Շրջակա տարածքների աղտոտում և աղբոտում</p> <p>Հողածածկի և մոտակա մակերևութային հոսքերի պահպանություն</p> <p>- Մթնոլորտային օդի աղտոտում</p>	<p>- Կլիմայի և կենսադային թափոնները պահեստավորել հատուկ նախատեսված սենյակներում, որոնց մուտք կունենան միայն հատուկ հրահանգավորված աշխատակիցներ</p> <p>- Կենսադային աղբի համար բժշկական կենտրոնի ամբողջ տարածքում տեղադրված են աղբամաններ</p> <p>- Կանոնավոր աղբահանում:</p> <p>- Վառարանի մաքրումը կատարել չոր եղանակով</p> <p>- Բացառել կլիմայի և կենսադային թափոնների ներթափանցումը արտաքին տարածքներ, որի հետևանքով կարող են արձրևաջրերի հետ տարածքվել շրջակա միջավայրում</p> <p>- Ապահովել վառարանի հիմնական և լրայրման խցերի ջերմաստիճանային ռեժիմի պահպանում:</p> <p>- Թույլ չտալ թափոնների կուտակում կայանքի մասնաշենքում:</p> <p>- Կազմակերպել բժշկական կենտրոնի տարածքի և մերձակա բնակելի թաղամասերի սահմանի</p>	<p>Բժշկական կենտրոնի տնտեսական ծառայություն</p> <p>Բուժ.ամձնակազմ</p> <p>Բժշկական կենտրոնի տնտեսական ծառայություն</p> <p>Սերտիֆիկացված</p>	<p>Երևանի քաղաքապետարան</p> <p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p> <p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p> <p>Բժշկական կենտրոնի տնտեսական</p>

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Միջոցառման պատասխանատու</i>	<i>Արտաքին վերահսկողություն</i>
Թափոնների պահեստավորում, ախտահանում, այրում	գ/ Աշխատանքի անվտանգություն, աշխատանքային պայմաններ	<p>տարածքի մոնիթորինգ</p> <p>- Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ:</p> <p>- Այրման կայանքի աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով:</p> <p>- Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:</p>	լաբորատորիա Բժշկական կենտրոնի տնօրինություն	Ճառայություն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին

Կիզարանը և ախտահանման սարքավորումը գնվելու է կապիտալ ներդրումների հաշվին: Մնացած բնապահպանական միջոցառումների տարեկա գումարը, ներառյալ մոնիթորինգը, կկազմի՝ 560.0 հազար դրամ:



Բժշկական
կենտրոնի
տեղադիրքը